ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 06 հուլիսի 2018թ. Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 Սահմանված ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվել է Տեղեկատվություն, համաձայն որի N 12, 20 և 21 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ստարտկոպի» ՍՊԸ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվել է ծանուցում մասնակցին, որպեսզի վերջինս ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն սահմանված ժամկետում շտկի արձանագրված անհամապատասխանությունը:

2.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի գնահատում:

3.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ մասնակիցը N 14 չափաբաժնի մասով սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին է ներկայացրել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի տեքստով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով վերը նշված 2.1 և 2.2 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. N 12, 20 և 21 չափաբաժինների մասով «Ստարտկոպի» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացված հայտը **մերժել**:
2. N 21 չափաբաժնի մասով **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից N 21 չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ստանալուց հետո:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան
	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան
	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան